ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ. ՆՎԻՐՈՒՄ ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆԸ

Լրացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի ծննդյան 60-ամյակը:

Ա. Աղասյանը ծնվել է 1956-ի օգոստոսի 11-ին, ՀԽՍՀ-ի Սիսիան քաղաքում: Հայրը՝ Վլադիմիր Աղասյանը, տնտեսագիտության թեկնածու էր, ՀԽՍՀ վաստակավոր տնտեսագետ:

1973-ին Ա. Աղասյանն ավարտում է Երևանի - 122 միջնակարգ ռուսական դպրոցը և նույն տարում ընդունվում Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի արվեստաբանական բաժինը, որն ավարտում է 1978-ին՝ ստանալով «արվեստի պատմաբանի» որակավորում, վերադառնում հայրենիք և օգոստոսի 1-ից աշխատանքի անցնում ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնում՝ որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող, գիտքարտուղար (1991-2003), առաջատար գիտաշխատող (2005), տնօրեն (2003-ից մինչ օրս):

Վաղ է ի հայտ գալիս երիտասարդ արվեստաբանի կազմակերպչական ջիղը. շուտով նա նշանակվում է ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների գիտխորհրդի նախագահ, 1981-ին արդեն գիտական խորհրդի անդամ էր:

Ա. Աղասյանը 1989-ին Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Մարտիրոս Սարյանի ստեղծագործական մեթոդի ձևավորումը» թեմայով, իսկ 2007-ին Երևանում՝ դոկտորական ատենախոսություն՝ «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» թեմայով, ապա ստանում «Արվեստագիտություն» մասնագիտությամբ պրոֆեսորի գիտական կոչում (2007):

2003-ի գարնանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կողմից Ա. Աղասյանն առաջադրվում և հունիսի 6-ին ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից միաձայն հաստատվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, իսկ 2008-ին և 2013-ին վերընտրվում նույն

պաշտոնում: 2003-ից Ա. Աղասյանն ինստիտուտի գիտական խորհրդի նախագահն է:

Ի դեպ՝ տնօրենի պաշտոնում Ա. Աղասյանի ընտրվելը նաև ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի կամքն էր. իր այդ ցանկությունը նա հայտնել էր դեռևս տարիներ առաջ՝ իր պաշտոնավարման ընթացքում՝ հանձին Ա. Աղասյանի տեսելով իր արժանի իրավահաջորդին:

Ընտրվելով ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն՝ Ա. Աղասյանը՝ «խախտեց» ինստիտուտի «թատերագիտական» ուղղվածությունը. չէ որ ինստիտուտի նախկին երկու ղեկավարները՝ առաջին և երկրորդ դիրեկտորներ Ռուբեն Զարյանն ու Լևոն Հախվերդյանը թատերագետներ էին, և դարձավ ինստիտուտի առաջին կերպարվեստագետ տնօրենը՝ միաժամանակ զարգացնելով իր նախորդների ավանդույթները՝ ինստիտուտում պահպանելով Ռուբեն Զարյան-Լևոն Հախվերդյանական համերաշխ ու ստեղծարար մթնոլորտը:

Լ. Հախվերդյանի և ինստիտուտի կոլեկտիվի ընտրությունը միանգամայն ճիշտ էր. այսօր Ա. Աղասյանը ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների լավագույն տնօրեններից է, և օրինաչափ է, որ նա ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ արվեստագիտության գծով (2014), պարգևատրվել ՀՀ ԳԱԱ Պատվոգրով (2005) և ՀՀ ԳԱԱ Վաստակագրով (2016):

Ա. Աղասյանի գիտական կենսագրությունը հերքում է այն տարածված տեսակետը, թե այնքան էլ դյուրին չէ համատեղել գիտակազմակերպական արդյունաշատ աշխատանքն ու գիտական բեղմնավոր գործունեությունը:

Ա. Աղասյանի գիտական գործունեությունը բաղկացած է երկու շատ կարևոր բաղադրիչներից՝ գիտական հետազոտություններ և կադրերի պատրաստում: Երկու ասպարեզներում էլ արդյունքներն առավել քան խոսուն են:

Ա. Աղասյանն էական ու մնայուն ավանդ ունի հայ արվեստագիտության զարգացման գործում: Նրա գրչին են պատկանում նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի ու գեղարվեստական մտքի պատմության ուսումնասիրությանը նվիրված 11 գրքեր ու մենագրություններ, շուրջ 150 գիտական և գիտահանրամատչելի հոդվածներ, որոնք լույս են տեսել ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, ԱՄՆ-ի, ԳՖՀ-ի, Հունգարիայի, Լիբանանի, Լեհաստանի գիտական ժողովածուներում, կերպարվեստին նվիրված հանրագիտարաններում և պարբերականներում:

Ա. Աղասյանն առաջինն է ուսումնասիրել և հայերենով շարադրել նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի ամբողջական պատմությունը: Արվեստաբանի երկարամյա հետազոտությունների հանրագումարը դարձավ ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով պետական պատվերի շրջանակում հրատարակված, գեղարվեստական, պատմամշակութային և

փաստագրական մեծածավալ ու հարուստ նյութ պա-րունակող «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարե- -րում» հիմնարար ուսումնասիրությունը: Հեղինակն առաջին անգամ հանգամանորեն լուսաբանում է հայ կերպարվեստի պատմական ուղին՝ սկսած Ռուսաստանի կազմում 1801-1828 թթ. Արևելյան Հայաստանի ընդգրկվելուց մինչև մեր օրերը: Երևանի, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Թբիլիսիի պետական և մասնավոր թանգարաններում ու արխիվներում պահվող ստեղծագործությունների, ցուցահանդեսային կատալոգների, ձեռագրերի ու վավերագրերի, հին ու նոր գեղարվեստական մամուլի, հայ արվեստագետների գրական ժառանգության համակողմանի ուսումնասիրության շնորհիվ հեղինակը կատարել է փաստական բազմաթիվ ճշտումներ, զուգահեռներ անցկացրել XIX դ. կեսերի արևելահայ և արևմտահայ կերպարվեստի բնորոշ միտումների, գեղար-վեստական համանման ու յուրահատուկ երևույթների միջև, լայնորեն ներկայացրել ու նորովի մեկնաբանել խորհրդահայ կերպարվեստը, բնութագրել Հայաստանի Հանրա-պետության գեղարվեստական կյանքում կատարված տեղաշարժերը, դրանց դրական ու բացասական հետևանքները[1]: Գիտական շրջանառության մեջ դրած հայերեն մասնա-գիտական մի շարք եզրույթներով և հասկացություններով նա հարստացրեց արվեստաբանության ասպարեզում գործածվող բառապաշարը: Նյութը դիտարկելով և լուսաբանելով տարբեր տեսանկյուններից, պատմամշակութային լայն համատեքստում, մոռացությունից հանելով բազ-մաթիվ դեմքեր ու ստեղծագործություններ, հեղինակը բացահայտել և մատնանշել է XIX-XX դդ. հայ կերպարվեստին առավել բնորոշ գծերն ու զարգացման օրինաչափությունները: Ընդգրկելով կերպարվեստի բոլոր հիմնական տեսակներն ու բացահայտելով XIX-XX դդ. հայ նկարչության և քանդակագործության ազգային առանձնահատկությունները, Ա. Աղասյանը տալիս է հայ կերպարվեստի պատմության նոր և նորագույն փուլերի օբյեկտիվ պատկերը:

2007-ին Մոսկվայում լույս տեսավ արվեստագիտության դոկտոր Նոնա Ստեփանյանի "Искусство Армении" մենագրությունը[2], որի՝ հետխորհրդային Հայաստանի կերպարվեստին նվիրված գլուխը գրել է Ա. Աղասյանը:

Կերպարվեստի ոլորտում 2009 թ. ՀՀ պետական մրցանակի արժանացավ «Հայ արվեստի պատմություն» կոլեկտիվ հիմնարար աշխատությունը[3]. սրանում Ա. Աղասյանը հեղինակել է XIX-XX դարերի հայ կերպարվեստի պատմությանը նվիրված ընդարձակ բաժինները:

---

[1] **Աղասյան Ա.**, *Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Ե., 2009:*

[2] **Агасян А.** *Искусство Армении постсоветского периода (Заключительный раздел книги Нонны Степанян "Искусство Армении", М., 2007).*

[3] **Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ.**, *Հայ արվեստի պատմություն, Ե., 2009:*

Ա. Աղասյանը XIX դ. արևմտահայ կերպարվեստի պատմության առաջին հետազոտողներից է: Նա առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել տասնյակ մոռացված անուններ և ստեղծագործություններ, ուսումնասիրել արևմտահայ շուրջ երեք տասնյակ արվեստագետների կյանքն ու ստեղծագործությունը:

Ծանրակշիռ է վաստակաշատ արվեստաբանի ներդրումը սարյանագիտության և քոչարագիտության բնագավառներում, խորհրդային ու հետխորհրդային հայ կերպարվեստի, ինչպես նաև գեղարվեստական կյանքի ուսումնասիրման գործում:

1992-ին Երևանում հրատարակվեց Ա. Աղասյանի առաջին՝ "Мартирос Сарьян. Раннее творчество" մենագրությունը[4]՝ հետաքրքրություն առաջացնելով Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Մինչ այդ՝ 1980-ին հրատարակվել էր Մարտիրոս Սարյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը, որի համահեղինակներից մեկը Ա. Աղասյանն էր[5]: Իսկ "Символизм и творчество Мартироса Сарьяна" մենագրության մեջ[6], որը լույս տեսավ 2012-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ պետական պատվերի շրջանակներում, հեղինակը բացահայտել է Սարյանի ստեղծագործական կյանքի այդ շրջանի արվեստի ձևառճական և գաղափարական-կերպարային բնորոշ առանձնահատկությունները, Վարպետի ստեղծագործության վաղ փուլը դիտարկել պատմամշակութային լայն հենքի վրա, իսկ նրա առանձին գործերը ներկայացրել XIX դարավերջի և XX դարասկզբի ռուս և արևմտաեվրոպական նկարիչների աշխատանքների համադրությամբ:

2013-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակվեց «Երվանդ Քոչարի տարածության մեջ» մենագրությունը[7], որտեղ Ա. Աղասյանը ներկայացրել է XX դարի հայ ականավոր արվեստագետներից մեկի՝ քանդակագործ, գեղանկարիչ և գծանկարիչ Երվանդ Քոչարի կյանքն ու արվեստը: Մինչ այդ Քոչարի արվեստին անդրադարձել էր "Ерванд Кочар" մենագրության մեջ[8], մի շարք գիտական հոդվածներում և զեկուցումներում, հեղինակել Գերմանիայի Բոխում քաղաքում 1994-ին տեղի ունեցած Հայաստանի մշակույթին նվիրված հետահայաց ցուցա-հանդեսի գիտական կատալոգում Քոչարին նվիրված հոդվածը և Ե. Քոչարի հոբելյանական ցուցահանդեսի կատալոգի առաջաբանը (2010):

Ինչպես հայտնի է՝ «Հայագիտության կարևոր բնագավառներից են սփյուռքագիտությունը, հարևան ժողովուրդների հետ հայերի պատմամշակութային հարաբերությունների ուսումնասիրությունը»[9]: Մշակութային կապերի ուսումնասիրությունը եղել է ու

---

[4] **Агасян А.** *Мартирос Сарьян. Раннее творчество, Е., 1992.*

[5] **Ղազարյան Մ., Աղասյան Ա.,** *Մարտիրոս Սարյան: Կյանքի և ստեղծագործության տարեգրություն, Ե., 1980:*

[6] **Агасян А.** *Символизм и творчество Мартироса Сарьяна, Е., 2012.*

[7] **Աղասյան Ա.**, *Երվանդ Քոչարի տարածության մեջ, Ե., 2013:*

[8] **Агасян А.** *Ерванд Кочар, Е., 1999.*

[9] *Հայեցակարգ հայագիտության զարգացման, հոդված 1. Ընդհանուր դրույթներ, կետ 1:*

շարունակում է մնալ Ա. Աղասյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում: Դրա վկայությունն են հայ-ռուսական, հայ-ֆրանսիական և հայ-իտալական գեղարվեստական կապերին նվիրված նրա գիտական հրապարակումներն ու զեկուցումները:

Իր գիտական ուսումնասիրություններում Ա. Աղասյանը մեծապես կարևորում է հարևան երկրների, ինչպես նաև Ռուսաստանի ու Եվրոպայի հետ XIX-XX դարերում հայ կերպարվեստի ունեցած առնչությունները և զուգահեռները: 2015-ի տարեմուտին ՀՀ ԳԱԱ գիտահրատա-րակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս տեսավ Ա. Աղասյանի և Ա. Ասատրյանի «Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ (XIX դար–XX դարի սկիզբ)» աշխատությունը[10], որի առաջին՝ «Սանկտ Պետերբուրգում կրթված հայ արվեստա-գետները» վերնագրով պատմական ակնարկում Ա. Աղասյանը հանգամանորեն ներկայացրել է Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքում՝ Գեղարվեստի կայսերական ակադեմիայում և գեղարվեստական այլ կրթարաններում մասնագիտացած, այնտեղ ապրած և գործած հայ արվեստագետների՝ նկարիչների ու քանդակագործների ստեղծագործական դիմանկարները՝ գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք մոռացված կամ գրեթե մոռացված անուններ, անհայտ ստեղծագործություններ, կեն-սագրական նորահայտ փաստեր ու վկայություններ:

Նշանակալի է Ա. Աղասյանի ներդրումը սփյուռքագիտության բնագավառում՝ սփյուռքահայ կերպարվեստի ուսումնասիրության գործում: 2009-ին լույս տեսավ ՀՀ Սփյուռքի նորաստեղծ նախարարության և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի համատեղ հիմնարկված «Ակնարկներ սփյուռքահայ կերպարվեստի պատմության» մատենաշարի առաջին հատորը՝ Ա. Աղասյանի «Քաջազի մշտավառ կանթեղը» աշխատությունը[11]: Ամերիկահայ անվանի գեղանկարիչ Քաջազունի Քեչեճյանին նվիրված աշխատության մեջ հեղինակը հայ արվեստագիտության մեջ առաջին անգամ՝ փաստական նյութի լայն ընդգրկմամբ, հանգամանորեն ներկայացրել է արվեստագետի անցած ուղին, նկարչի արվեստը մատուցել ժամանակագրական հերթագայությամբ՝ ըստ շրջանների, և լուսա-բանել տարբեր կողմերից: Ա. Աղասյանը Հայաստանում ֆրանսահայ ականավոր նկարիչ Լևոն Թութունջյանի կյանքի ու ստեղծագործության առաջին ուսումնասիրողներից է: Նա անդրադարձել է Սարգիս Խաչատուրյանի, Արմինիա Կարբոնել-Բաբայանի, Հակոբ Գյուրջյանի և այլոց արվեստին: Սփյուռքահայ արվեստի ուսումնասիրությանն են

---

[10] **Աղասյան Ա., Ասատրյան Ա.**, *Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ (XIX դար – XX դարի սկիզբ), Ե., 2015:*

[11] **Աղասյան Ա.**, *Քաջազի մշտավառ կանթեղը (Ակնարկներ սփյուռքահայ կերպարվեստի պատմության), Ե., 2009:*

նվիրված Ա. Աղասյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանված թեկնածուական ատենախոսություններից հինգը:

2009-ին Ա. Աղասյանի նախաձեռնությամբ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում ստեղծվեց Սփյուռքահայ արվեստի բաժինը (2013-ից՝ Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժին), որն այժմ ղեկավարում է Ա. Աղասյանը: «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման, հայապահպանության բնագավառում ներդրած ավանդի, նախարարության հետ ակտիվ համագործակցության և իրականացված ծրագրերին ցուցաբերած համակողմանի աջակցության համար» 2013-ին Ա. Աղասյանն արժանացել է ՀՀ սփյուռքի նախարարության շնորհա-կալագրի:

Բազմավաստակ արվեստաբանն է հեղինակել հայ երիտասարդ արվեստագետների, մեր խոշորագույն վարպետներից մեկի՝ Վարդգես Սուրենյանցի մասին պատմող աշխատությունները[12], ինչպես նաև շարադրել «Հայոց պատմություն» քառահատորի՝ նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստին վերաբերող բաժինները:

Ա. Աղասյանի մենագրությունների մասին շուրջ 50 գրախոսականներ են տպագրվել ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Կանադայում, Լիբանանում, Իրանում: Նրա գիտական խմբագրությամբ հրատարակվել է 52 գիրք ու մենագրություն:

Ա. Աղասյանի պաշտոնավարման 13 տարիների ընթացքում ինստիտուտում վերստեղծվել է թատրոնի բաժինը (2004), ստեղծվել ինստիտուտի կայքը, հիմնարկվել են «Հայ արվեստի հարցեր» և «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարերը, աշխուժացել է միջազգային համագործակցությունը: 2014-ից ինստիտուտը հրատարակում է «Կանթեղ» գիտական պարբերականը:

Ինստիտուտում ստեղծված բարոյահոգեբանական և գիտաստեղծագործական բարերար մթնոլորտում այդ տարիներին պաշտպանվել է 6 դոկտորական և 25 թեկնածուական ատենախոսություն, գումարվել են բազմաթիվ գիտական նստաշրջաններ: Ա. Աղասյանն ակտիվորեն մասնակցել է ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի կազմակերպած բոլոր միջազգային գիտաժողովների կազմակերպմանը՝ ապահովելով դրանց արվեստի մասնաճյուղերի աշխատանքների բարձր մակարդակը:

Ինստիտուտի գիտական անձնակազմում այսօր ընդգրկված են ՀՀ ԳԱԱ չորս թղթակից անդամ (բոլորն էլ Արվեստի ինստիտուտի գիտական ստորաբաժանումների ղեկավարներ), գիտության 14 դոկտոր և 34 թեկ-նածու: Ա. Աղասյանի պաշտոնավարման տարիներին գիտաշխատողներից տասներեքն արժանացել են ՀՀ պատվավոր կոչումների՝ այդ ցու-

---

[12] **Աղասյան Ա.**, *Հայաստանի երիտասարդ նկարիչները, Ե., 1987:* **Աղասյան Ա.**, *Վարդգես Սուրենյանց (1860-1921), Ե., 2010:*

ցանիշով Արվեստի ինստիտուտն այսօր ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների մեջ առաջատարն է:

2008-ին իր հիմնադրման 50-ամյակը բոլորեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը: Հոբելյանը նշվեց պատշաճ մակարդակով, պետական պատվերի շրջանակներում հրատարակվեց «ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ-50» գիրքը[13], իսկ ինստիտուտի գիտաշխատողներից շատերը պարգևատրվեցին ՀՀ ԳԱԱ Վաստակագրերով ու Պատվոգրերով, ՀՀ Կրթության և գիտության ու Մշակույթի նախարարությունների ոսկե մեդալներով, Պատվոգրերով ու Շնորհակալագրերով:

Ա. Աղասյանի նախաձեռնությամբ վերականգնվել է ՀՀ ԳԱԱ Թորոս Թորամանյանի անվան մրցանակը, որն արդեն շնորհվել է երկու անգամ՝ 2011-ին՝ և 2016-ին:

2008-ից ինստիտուտում իրենց հետբուհական ասպիրանտական կրթությունն են շարունակում Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիները, որոնք ավարտելով ասպիրանտուրան՝ հաջողությամբ պաշտպանում են իրենց թեկնածուական ատենախոսությունները, ստանալով արվեստագիտության կամ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան: Ավելին՝ Արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդում են իրենց թեկնածուական ատենախոսությունները պաշտպանում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի իրանցի ասպիրանտները: Այդ տեսակետից Արվեստի ինստիտուտը դառնում է տարածաշրջանային կենտրոն:

Բեղմնավոր է Ա. Աղասյանի մանկավարժական գործունեությունը: Տասնամյակներ շարունակ դասավանդելով Երևանի պետական համալսարանում և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում՝ նա իր սեփական փորձն ու գիտելիքներն է փոխանցում ապագա արվեստաբաններին, ղեկավարում արվեստաբանության գծով պետական քննությունների և ավարտական աշխատանքների հանձնաժողովները Երևանի պետական համալսարանում, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Ծանրակշիռ է Ա. Աղասյանի ներդրումը երիտասարդ կադրերի պատրաստման գործում. նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական տասներեք ատենախոսություն: Նրա սաների թվում են ինչպես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների կորիզը կազմող հետազոտողները, այնպես էլ սփյուռքահայ արվեստագիտության առաջին ու դեռևս միակ թեկնածուն՝ Մովսես Հերկելյանը (Լիբանան) և պարսիկ նկարչուհի Մանդանա Սեփասին (Իրան):

Ինստիտուտում հաջողությամբ է լուծվում գիտական անձնակազմի սերնդափոխության հարցը: 2004-ին վերստեղծվեց ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների

---

[13] **Ասատրյան Ա.**, *ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ-50 (պատասխանատու խմբագիր՝ Ա. Վ. Աղասյան), Ե., 2010:*

խորհուրդը, և ինստիտուտի պատմության մեջ առաջին անգամ կազմակերպվեցին արդեն ամենամյա դարձած երիտասարդ արվեստաբանների գիտական նստաշրջանները: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո իրականացվող՝ Երիտասարդ գիտնականների ծրագրի շրջանակում 2016 թ. սեպտեմբերի 30–հոկտեմբերի 2-ին գումարվելու է հերթական՝ տասնմեկերորդ նստաշրջանը՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին:

Իր գիտաստեղծագործական, գիտակազմակերպական ու մանկա-վարժական գործունեությունն Ա. Աղասյանը համատեղում է հասարակական ակտիվ գործունեության հետ: Նա Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության անդամ է (2007-ից), Սանկտ Պետերբուրգի՝ Պետրոս Մեծի անվան գիտությունների և արվեստների ակադեմիայի թղթակից անդամ (2009), Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ (2011): Ընդգրկվել է «Հանրապետության Նախագահի մրցանակների շնորհման» արվեստի (2006-2009), «Գրականության և արվեստի բնագավառում արվեստի ոլորտի ՀՀ պետական մրցանակների շնորհման» (2009) և «Հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ՀՀ պետական մրցանակների շնորհման» (2011, 2013, 2015) հանձնախմբերում: Ա. Աղասյանը ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի անդամ է, ՀՀ նկարիչների միության վարչության անդամ: Ընդգրկված է ՀՀ ԳԱԱ փորձագիտական ազգային բյուրոյի, Հայաստանի ազգային պատկերասրահի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Հայաստանի ժողովրդական արվեստի, ինչպես նաև Կոմիտասի թանգարան-ինստիտուտի, Մարտիրոս Սարյանի ու Երվանդ Քոչարի թանգարանների գիտական խորհուրդների, ՀՀ ԳԱԱ «Հայկական հանրագիտարանի» գիտահրատարակչական խորհրդի կազմում:

Գիտական ու գիտակազմակերպական ծանրակշիռ վաստակի համար Ա. Աղասյանն արժանացել է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման (2008), պարգևատրվել ՀՀ կրթության և գիտության նախարարության «Ոսկե հուշամեդալով» (2008), ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալով» (2008):

Շնորհավորելով մեր գործընկերոջը՝ նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստագիտության առաջատարին, մաղթում ենք արևշատություն և գիտական նորանոր ձեռքբերումներ՝ ի շահ հայագիտության հետագա առաջընթացի:

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՅՈՒ. Մ.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԱՍԱՏՐՅԱՆ Ա. Գ.
Արվեստագիտության դոկտոր